

891.99

2-97

391.542-3


2-97

ՅՈՒՀԱՆՆԵՍ ԶՐԱՐԵՐԳՈՒՄ



Մ Ե Ռ Ա Ի

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.




БАНУ

Типографія А. Н. Тараева и Л. Д. Мирзаянца  
1912.



uy



## Մ Ե Ռ Ա Ի:

Գիւղը վաղուց էր խռրմփում խոր քնի մէջ: Ձայն ու ծրպտուն չ'կար: Կենդանութիւնը քնի անուշութեան մէջ խոր թաղած իր հանգիստն էր առնում:

Գիւղի վերեւի թաղում Գիւլգաղ տառի թոնրի ծուխը քուլւմ, քուլւմ բարձրանում էր և տարածւում դէպի գիւղի գլխին փուած սարի գագաթը ու ծածկում լուսնի գեղեցիկ դէմքը, որը երկնքից ժպտադէմ նայում էր երկրին և տարածում նորա վրա իր աղօտ լոյսը:

Թոնրի կոխքին նստած Գիւլգաղ տառը կրտսրտում էր փոքրիկ ծահանով տաշտի միջի խմորը, շարմաղ ալիւրի մէջ ոլորում, գեղեցիկ գնդիկներ կազմում ու տալիս ջահիլ Մարիամին, իւր հարսին, որը իւր քնքուշիկ ձեռքերով ուղիղ շարքերով դասաւորում էր կիսածալ մեզարի վրա ու ծածկում, որ չ'մըսացնի խմորը: Թոնրի մէջ ճրրթ-ճրրթալով այրում էր ցախը ու կարմրացնում թոնրի պատերը:

1007  
32452



Մարիամ ջան, վազիր իւղի օշնակը և մեծ գաւաթը բեր, — ասաց Գիւլզադ տատը հարսին և երկար երկաթէ ծողակով խառնեց թոնրի մէջ կրակը, կարգի բերեց ու աչքերը սրբելով դուրս եկաւ թոնրի դռան կանգնեց դարձաւ դէպ աղօթարան ու սկսեց մրմնջալ իւր առաւօտեան աղօթքը:

Աղօթքը վերջացրեց, երեսին երեք անգամ խաչ հանեց և հարսի բերած օշնակից հանեց կովի խնկագոյն դեղին իւղը, թափեց կաւից պաշրաստած մեծ գաւաթի մէջ, խառնեց շաքարն և ալիւրը ու սկսեց հարել իւր կնճռոտած ձեռքերով. իսկ Մարիամը, զգալով լուսնեակի մայր մտնելու մօտեցումը, նաւթի ճրագը կարգի բերեց՝ դրաւ նոր պատրիք հին կտաւից ու լորած, ածեց սև նաւթ, թոնրից հանեց մի ծայրը վառած փայտի ծողակը, — փռհ, փռհ, փռհ, — փչեց կրակից բոց հանեց և վառեց ճրագը ու դրաւ իւր տեղը:

Լուսնեակը անցաւ սարի գագաթների յետև: Թանձր մութը պատեց երկիրը: Թոնրի կողքին նստած, սպիտակ կտաւի գոգնոցը կապած, Գիւլզադ տատը ձեռքին հացթուխի տեափը առած, կըպցնում էր թոնրի պատերին շարմաղ Մարիամի քնքուշիկ գեղջկուհու մատներով նաշխած կաթնահունցներն ու գաթաները:

Մարիամ ջան, այս ի՞նչ նաշխուն, նաշխուն



ես շինում գաթաները, այսպէս լաւ է, շատ լաւ է — այս ի՞նչ է մարդու գլուխ ես դուրս բերել, բեխեր էլ կա, շատ լաւ է, շատ լաւ է, չ'լինի թէ ուղեցել ես Գրիգորի գլուխը քաշել:

Մարիամը խոր հառաչեց և երեսը ծածկող քողի տակ սրբեց արցունքները ու շարունակեց իւր գործը՝ հսկել թոնրի պատերից կպցրած գաթաներին ու կաթնահունցներին, որ կրակը չայրի և ժամանակին դուրս հանի թոնրից:

— Է՛հ, բալաջան, մի մտածիր, հրես ապերը գնում է, կ'բերէ, անպատճառ կբերէ իրան հետ, էլ հերիք է ինչքան մնաց զարիբութեան մէջ, — ասաց Գիւլզադ տատը և ինքը խոր հառաչելով դրաւ գետնին հացի տեափը ու գոգնոցի ծայրով սրբեց քրթնախառն արցունքները, որոնք դուրս վազեցին անոպասելի կերպով նորա պառաւած խոշոր նաշխուն աչքերից:

Հաւը խօսեց: Առաւօտեան լուսադիմից առաջ ընկած թանձր մութը սկսեց հաւաքել իւր փեշերը երկրից և տեղ տալ տարածւել սպիտակ մաքուր ցերեկայ քնքուշիկ վերմակին:

Գիւլզադ տատը գաթաներից ու կաթնահունցներից ջուկեց լաւերը, դարսեց խուրջինի մի անկիւնում. գաթաների մէջ դրեց տապակած հաւը, դատարկ մնացածը լցրեց խնձորներով, տանձերով ու չորացրած զանազան մրգեղենով. բոլորի գլխին դրեց մեղրով լիքը պլնձէ



ամանը. իսկ խուրջինի միւս անկիւնը դրեց գինով ու արաղով լիքը տիկերը:

Մարիամը հանեց իւր սունդուկից Գիւլզադ տատի մանած, իսկ Մարիամի գործած գուլբան դրեց խուրջինի մէջ, քաշեց նրա քողերը, կապեց ծայրերը ու դրեց դռնից մօտիկ մի անկիւնում:

Աքաղաղները ուրախ ուրախ երգում էին, հաւերը թառերից թևթփալով իջնում ու հաւաքւում էին տան շեմքը իրանց սովորական տեղը, սպասում Գիւլզադ տատին, որ գայ, իւր քաղցր ձայնով—ճո՛ւ, ճո՛ւ, ճո՛ւ կանչելով կուտ տա: Մարիամը դուրս եկաւ մարանից, ձեռքն բռնած խնը լիքը գարով, մտաւ գոմը, որ աւանակին կերակրի ճանապարհ ձգելու:

\* \*

Գիւղի փոքրիկ եկեղեցում ծերունի խ. քահանան առաւօտեան զանգերը քաշեց, մտաւ եկեղեցի, վառեց մոմերը ու սկսեց իւր աղօթքը: Եկեղեցու տաճանի մեծ սիւնի տակ կանգնած, ձեռքերը դէպի վերեւ, աչքերը չռած Տիրամօր պատկերի առաջ մի բարձրահասակ, լղար երեսով, ալեղարդ միրուքը կրծքին փռած, առոյգ ու զւարդ քաղցրադէմ մի ծերուկ: Նա աղօթում էր իւր համար բարի երթ և մերթ ընդ մերթ չոքած իւր աղօթքների մէջ «Գրիգորիս» անունն էր յիշում: Նա խնդրում էր Աստծուց,

որ արժանացնի իւր Գրիգորի տեսութեանը և զարիթութիւնից յետ դարձմանը, որ ծերութեան վերջին օրերը անցկացնի իւր օջախի տանիքի տակ որդու հետ:

Ժամասացութիւնը վերջացել էր, քահանան իւր վերջին «Հայր մեր»-ն էր ուղում կարգալ, երբ Սարգիս ապերը իւր չոփանման լղար ձախ ձեռքի մասներով բռնեց Տէր Հօր փիլօսի փէշը ու աջով դրեց նրա ձեռքի մէջ սպիտակ արծաթէ քսան կոպէկանոցը, — ա դէ՛ր, մին Տէր ողորմեայ չոքիր, քեզ մատաղ: Քահանան իւր մեղամաղձ ձայնով սկսեց իւր «Տէր ողորմեա»-ն, տիրացուի օգնութեամբ. եկեղեցու բակում ծառերի վրայից ձայնակցեցին ծտերը, որոնց ձայները միանալով քահանայի և տիրացուի ձայների հետ, մի հրաշալի մեղեդի կազմելով, մարդկանց սրտերից դուրս հանեցին տխրութեան կսկիծը: Սարգիս ապերը աղօթքը մրմնջալով, դողդոջուն միրուքի վրայից առատ հոսող արծաթանման արցունքները սրբեց, երեք անգամ ծունը չոքեց սեղանի առաջ, համբուրեց նրա վրա գտնուող խաչն ու աստուածաշունչը, մօտեցաւ Տէր Հօր ձեռքում գտնուող աւետարանը համբուրեց և ուղղեց իւր քայլերը դէպի տուն:

\* \*

Թ. գետի ափերի կանաչազարդ տափա-



րակներն Վրա Ե.-կայարան գնացող մեծ կարա-  
ւանը իւր միջօրէի հանգիստն էր առնում:  
Կառքերի, սայլերի ու «դիւրիջանների» ձիանները  
արձակած ուտում էին ամեն մէկը իրանց կէս  
օրւայ պաշարը, կառապանները իրանց կառքե-  
րում անուշ քնում ընկղմած խրոմփացնում  
էին: Ճանապարհորդները իրանց պաշարը հա-  
նած ուտում, խմում էին և իրանց տանող ար-  
թուն մնացած կառապաններին հիւրասիրում:  
Սարգիս ապերը կարաւանից մի քանի քայլ  
հեռու գետի ծանծաղուտի մօտ, մի մեծ քարի  
դէմ էր տեւել իւր չորացած, ոսկոռացած մէջքը,  
առաջը բացել սպիտակ կտաւից կարած տոպ-  
րակը, որի մէջ Գիւլզադ տառը դարսել էր իւր  
ամուսնու համար ճանապարհի պաշար, հանգիստ  
ուտում էր ու աչքը ձգում հեռու հօրիզոնի  
վրա, կարծես թէ մի բան որոնելիս լինէր այդ  
անորոշ տարածութեան մէջ: Այո, նա որոնում  
էր.... Նա իւր յիշողութեան մէջ ստեղծում էր  
սև աշխարհի պատկերը, նորա ուղեղի մէջ  
պատկերանում էր նաւթոթ աշխարհը իւր Գրի-  
գորով, թէ ինչպէս Գրիգորը կեղտոտ, նաւթոտ  
մէքենաների վրա քրտնաթաթախ բանում էր:  
Շատ անգամ են պատմել Սարգիս ապօրը Բագ-  
ւից եկեղանները նաւթաշխարհի կացութեան մա-  
սին, շատ անգամ է նա լսել, թէ ինչպէս ըս-  
պէսպէս մեքենաների անիւների մէջ մարդիկ

են ընկնում տրորւում, միս ու ոսկոռ ի մի  
խառնւում և թափւում գետնի վրայ, կամ մի  
ոտը կտրւում, մի ձեռքից զրկւում. շատ այդ-  
պիսի պատմութիւններ էր, որ անհա, Սարգիս  
ապօր ուղեղի մէջ պատկերանում էին հեռու  
հօրիզոնի մէջ: Մերթ նա ժպտադէմ երեսով  
նայում էր բոլորի վրա և երեւակայում, որ մի  
քանի օրից յետոյ իւր Գրիգորի հետ պիտի վե-  
րադառնայ նաւթի աշխարհից և ուրախացնէ  
Գիւլզադ տառին ու մատղահաս հարսին՝ Մար-  
իամին, մերթ ինչ որ սևագոյն պատկերնէր էին  
պատկերանում հօրիզոնի վրա և խորը հառաչ  
հանում նորա կրծքից ու վշտացնում նորա  
սիրտը:

Կարաւանը կերաւ իւր ճանապարհի պա-  
շարը, քնաթաթախ կառապանները լծեցին ձի-  
անները և սկսեց չուռն....

Բոլորից յետոյ էր գնում Սարգիս ապերը  
իւր նիհար իշուկի հետ, որի վրա դարսած էր  
Գրիգորի պաշարը: Ճանապարհի երկու կողմե-  
րից տարածւած բամբակների արաբերի գեղե-  
ցկութիւնը զմայլեցնում էր Սարգիս ապօր  
սիրտը և անհանել տալիս. թռչունները թփերի  
վրա ծըլվըլալով երգում էին, իսկ մեղունները  
շարան շարան այս ու այն թփերից հիւթ էին  
քաշում, որ պատրաստեն անուշ մեղր: Կանաչա-  
գարդ փոքրիկ բլրի վրա նստած չոբանը, իւր սրին-



զը բերանը առած, քաղցր սըլվըլոցով երգում էր ազատ դաշտեցուն յատուկ երգերից և մերթ ընդ մերթ—Հօ, հօ, հօ, հօ կանչում, որ ոչխարները հեռուն չ'գնան: Նորա առաջ նստոտել էին երկու հաւատարիմ շները, որոնք պատրաստ էին նորա հրամանները կատարելու: Ամբողջ կարաւանի ուշքը քաշեց իր վրա չորանը. իսկ Սարգիս ապերը սրբելով աչքերից գլոր-գլոր հոսող արցունքները չուխայի փեշքով, ձեռքի փայտի ծայրով մեղմ կերպով բթեց էշին և առաջ գնաց կարաւանի յետեից: Նորա յիշողութեան մէջ պատկերացաւ իւր քսանհինգ տարեկան ժամանակը, երբ բոլոր տաւարածների ու չորանների մէջ նա առաջին տեղն էր բռնում թէ խաղերի, թէ որսորդութեան և թէ հաւարի ժամանակ, նա յիշեց թէ ինչպէս բոլոր չորաններին ինքն էր սովորեցնում սրինգի վրա ածելը և թէ քանի քանի անգամ սարերի կալաւածատէր բէկէրը իրան կանչել էին սրինգ ածելու ղօնախլուղի կամ մի աղիղ օր եղած ժամանակներում....

\* \* \*

Երեկոյեան մութը ընկնում էր, ցերեկը սկսել էր իւր փէշէրը հաւաքել երկրից, երբ Սարգիս ապերը հասաւ Ե. կայարանը: Դեռ շուտ էր, ամբողջ չորս ժամ կար մինչև երկաթուղու գնացքը: Սարգիս ապերը վաղուց էր

լսել, որ կայարաններում շատ անգամ կողոպտում են մարդկանց: Լաստիկ արխալուղի զըրպանը տակից պինդ կապեց, խուրջինը դրեց կայարանի կամարների տակ սիւներից մէկի մօտ, ընկաւ աջ կողմի վրա ափսոս, որ թեի տակ խուրջինն էր պահւում, իսկ ամբողջ մարմնի տակ իւր կապած գրպանը, որտեղ մախմար զաւլուխի մէջ փաթաթած էր իւր ճանապարհածախսը և հանգստանում էր: Երկար ճանապարհը նորան այնքան էր անհանգստացրել, որ ընկնելուն պէս նա քնեց: Շատ քնեց թէ քիչ նա չ'զիտէր. յանկարծ շոգէմեքենայի սուլիչը նորան զարթնեցրեց, նա բնագոյրէն զգաց թէ հասել է ժամանակը գնալու այնտեղ, որտեղ նա կտեսնի իւր Գրիգորին: Կարճ ժամանակից յետոյ մեղմիկ կերպով շարժվեց շոգէմեքենան: Սարգիս ապերը մի գմայեցուցիչ դրութեան մէջ էր, նրան թւում էր թէ լողում է օդի մէջ. նա յիշում էր, թէ ինչպէս շատ ժամանակ զիշերները, երազում թռչում էր օդի մէջ, և այդ յիշողութիւնը նրան հասցնում էր երազատեսութեան. նա չէր ուզում հաւատալ, որ այդքան երկար սենեակների շարանը կարող է շարժել առանց դոմեշի, եզան կամ ձիու ուժի: Սառած դրութեան մէջ քաշեց իւր խուրջինը երկու ծնկների արանքը, այս ու այն կողմը նայեց, իւր նստած դրութիւնը կարգի բերեց



ու ընկաւ խոր մտածմունքի մէջ: Կիսաքուն դրութեան մէջ Սարգիս ապերը մերթ յիշում էր Գիւլգաղ տառի պատւէրը,—բեր, անպատճառ բեր, հերիք է ինչքան զարիւթութիւն քաշեց, նորա աշխատանքը մեզ հարկաւոր չէ՝ անպատճառ բեր:—Մերթ յիշում էր Մարիամի ջրակալած աչքերը, որոնք ամեն բոլոր պատրաստ էին թափել առատ արցունքների շարանը և կսկծացնել Գիւլգաղ տառի ու Սարգիս ապոր սիրտը: Մերթ յիշում էր թէ եարանք կայարանից յետ դարձրած իւր էշին տուն կը հասցնի քրեհտարը թէ չէ....

\* \* \*

Երկար էր թուում ճանապարհը, շատ երկար: Արդէն սկսել էր ծեղը բացւել, մեղմիկ կերպով սև թանձր խաւարը վեր էր քաշուում կանաչազարդ դաշտերից, արեգակը հեռու բարձր սարերի կատարների յետևից ցոյց տալ էր ուղում իրան: Սարգիս ապերը լուսամուտից նայեց և տեսաւ մի խումբ, որոնք իրանց ուլախների հետ գնում էին դէպի այն կողմը ուր ինքն էր գնում:—Երևի սրանք էլ զարիւթութեան մէջ երեխայ ունին, գնում են բերելու կամ տեսնելու:—Մտածում էր նա և ան քաշում, մտնելով նրանց դրութիւնը: Գնացքը մօտեցաւ վերջին կայարանին: Սուլիչը բարձր ու ձիգ սուլեց հաղորդելով նրա ժամանելը: Կայարանի կա-

մարների տակ հաւաքւած խիտ շարքերով ժողովուրդը ծովի ալիքի պէս չուեց ընդ առաջ: Դանդաղ կերպով վազօճների շարանը իւր վերջին լողը տւեց երկաթէ ծողակների վրա. խըշխըշաց ու կանգնեց կայարանի երկար ու բարձր սրահի տակ:

Մի քանի բոլորում հաղարաւոր մարդիկ դուրս թափւեցին վազօճներից ու այս ու այն կողմը ցրւելով թողեցին կայարանում վազօճները ուղեկցող ծառայողներին ու ժանդարմներին մի խումբ, որը կայարանի տեսուչի հետ կանգնած շոգէմէքենայի մօտ սպասում էին մի որևէ պատահմունքի մասին զեկուցում ստանալու:

Սարգիս ապերը խուրջինը ձեռին քաշել էր մի կողմը և սպասում էր կայարանի սրահի տակ մայթոցի ազատման, որ տեսնէ թէ որ կողմը պիտի գնա: Նորանից մի քանի քայլ հեռաւորութեան վրա կանգնած էր մի երիտասարդ կեղտոտ հագուստի մէջ: Սարգիս ապերը մօտեցաւ նրան, հանեց ծոցից մի ութածալ թղտի կտոր, ցոյց տւեց կանգնած երիտասարդին ու հարցրեց.—բալաջան, կարդալ գիտես, քեզ մատակ, մին կարդա և ցոյց տուր թէ որտե՞ղ է էդ «գաւօղը»:—Երիտասարդը նախ քան կարդալը հարցրեց.—ապեր ճրտեղացի ես—ստանալով պատասխանը, կարգաց նամակի չորորդ երեսի վերջին տողերը և ցոյց տւեց Սարգիս



ապօրը նամակում գրած «ղաւօղի» ճանապարհը:

Սարգիս ապերը առաւ իւր խուրջինը ուսի վրա ու ուղղեց իւր քայլերը անծանօթ երիտա-  
սարգի ցոյց աւած ճանապարհով: Նաւթի բուր-  
գէրից գէշ հօտը ծակում էր Սարգիս ապօր  
քիթը, որին հեշտ շատ հեշտ տանելի էր գիւղե-  
րի գոմերից փշող կենդանիների արտաթորու-  
թիւնների հօտը, քան թէ նաւթինը կամ գազինը.  
ճանապարհի երկու կողմերից հոսում էին ա-  
ռուակներ, որոնց երեսը թղտի հաստութեամբ  
ծածկել էր նաւթը.—Նարմբ, այս ջրից է՛ն խը-  
մում այստեղ ապրողները—մտածում էր Սար-  
գիս ապերը ու գգուշութեամբ քայլում ճանա-  
պարհի «մաքուր տեղերով» որ իր եզան կաշ-  
ւից նոր կարած տրեխները իրենց տրխակապ-  
ներով, որ նոր էր գործել Մարիամը ոչխարի  
բրդից, չ'կեղտոտուեն նաւթով: Քանի՛ քանի՛ տե-  
ղերում բուրգէրի մէջ գանուղ մէքենաներից  
գուրս եկած գոլորշին իւր նաւթախառն կա-  
թիլներով ծածկեցին Սարգիս ապօր ճանապար-  
հը, որից զգւելով նա անիծում էր այդ վայրն էլ  
իւր ճանապարհն էլ:—Այստեղի հօցը հարամ է,  
սա աշխատանք չէ, սա Աստուծոյ պատիժ է. ան  
Աստուած, փառքըտ շատ. պա մարդ մեր կանաչ  
սարերը, ձորերը, մեր բաղերը, բախճաները,  
էն կաթնահօտ աղբիւրի ջրերը կ'թողնէ և կը-  
գա այդ դժոխքը՝ դժոխք ասածը հէնց սա է որ

կայ, —մտածում էր Սարգիս ապերը և քայլում:

\* \* \*

Նաւթահանքերի ու արհեստանոցների կէս  
օրւա գործաթողի սուլիչները բարձր ձայնով  
կանչում էին՝ որոնց ճաշի, որոնց հանրակա-  
ցարանից գործի Տ. Ա.-նի արհեստանոցի ու  
նաւթահանքի բանւորները շարան շարան գալիս  
էին հանքաբաժիններից կէս օրւա հանգիստը  
առնելու, սոված փորները մի բանով կշտացնե-  
լու, որ կրկին, մի ժամից յետոյ կաշեն իրանց  
դաժանագիր աշխատանքին, մրոտ ու նաւթոտ  
հանքում: Բոլոր եկող ու գնացողների ուշքը  
իւր վրա էր առել Սարգիս ապերը:

Հանրակացարանի այս ու այն անկիւնում  
խումբ խումբ բանւորների մէջ ինչ որ քըս-  
փսոց էր նկատւում, Սարգիս ապերը իւր գիւ-  
ղում հարեան Մկրտչի տղա Արշակի երեսի վրա  
մի տխրութիւն էր կարդում, որ ծածկելու հա-  
մար Արշակը տեղի անտեղի շուտ շուտ իւր ե-  
րեսին ժպիտ էր բերում, որ ցոյց ապ Սարգիս  
ապօրը իրան ուրախ: Արշակի Սարգիս ապօրը  
աւած ժամանակը, երբ պէտք էր Գրիգորը  
«վերադառնար» գործից վաղուց էր անցել: Նա  
այս ու այն կողմն էր ընկնում, ընկերների հետ  
խորհուրդներ անում, թէ ինչպէս մօտենան իս-  
կական հարցին և ինչպէս անեն, որ ծերուկի  
սրտին ծանր հարւած չ'տան մի անգամից:



Այսպիսով Սարգիս ապօր անհանգստութիւնը քաշքշեցին մինչև երեկոյեան սուլիշներէ աղմուկը: Ալեգարդ ծերունի հայրը սրտատրօփ սպասում էր, թէ երբ իւր Գրիգորը գործից յետ կգայ, որ առնէ իւր թեւերի մէջ համբոյրներով իւր սրտի կարօտը առնի և ուրախութեան արցունքներով թռչէ մագերը: Երեկոյեան «վախտի» արհեստաւորներն ու բանւորները կրկին սուլիշի հրաւերով շարան շարան դնացին գործի, գործից յետ դարձողները եկան կացարան. իսկ Գրիգորը չ'կար ու չ'կար: Արշակը հաւաքել էր իւր գիւղացիներէից մի քանիսին և հանրակացարանի իւր ամենամօտիկ ընկերներին վերջին խորհուրդն էին անում, թէ ի՞նչ կերպ իմացնեն Սարգիս ապօրը Գրիգորի մահւան մասին:

Հանրակացարանի երկու սիւների արանքում ամրացրած աղտոտ սեղանի շուրջը նըստած Սարգիս ապերը խոր մտածողութեան մէջ էր, երբ դրսից իւր գիւղացիներից մի խումբ Արշակի առաջնորդութեամբ մտան կացարանը և սովորական բարեներից յետոյ շրջապատեցին Սարգիս ապօրը ու սկսեցին գիւղի դռնութիւնից ու իրանցներից հարց ու փորձով զբաղեցնել ապօրը մինչև, որ Արշակը յարմար վայրկեան գտնէր և ասէր, որ Գրիգորը «հիւանդանոցում պարկած է»:— Արշակ ջան, պահ ի՞նչ ելաւ Գրիգորը, էսքան ժամանակ գործը չ'վերջա-

ցրեց, ի՞նչու չի գալիս, երեւի չեք ասել գալուս մասին:— Բոլորը լռեցին ու Արշակի երեսին նայեցին: Ծերուկի խոշոր աչքերը չովեցին դէպի Արշակի շրթունքները: Արշակը իւր կոկորդում խեղդելով լացի ձայնը հառաչանքով սկսեց,— ապեր Գրիգորը այս երկու օրերիս մի քիչ մըըսել էր, գլուխը ցաւում էր, երեկ տարանք հիւանդանոց բժշկի մօտ... Էլ չ'կարողացաւ շարունակել նա և սիրտը լցած դուրս եկաւ կացարանին կից խոհանոցը վերցրեց թիթեղեայ թէյամանը, մտաւ ու սկսեց թէյ պատրաստել Սարգիս ապօր ու եկւորների համար:— Արշակ ջան հապա ի՞նչու ցերեկով չասեցիր գնայինք երեխիս տեսնէինք, ի՞նչու ինձ խաբեցիր թէ կէսօրին կըգայ, երեկոյեան կըգայ, գլխացաւը ի՞նչ է, որ նրա համար մարդ պարկի... այսպիսի երկար ու շատ հարցեր էր, որ դողդոջուն շրթունքներից, կրակոտ ձայնով տեղում էր Արշակի գլխին: Արշակը շարած էր, ի՞նչ աներ — Ապէր, մտածում էի ասեմ, բայց մէկ էլ մըտածում էի, որ մի քիչ հանգստանաս յետոյ ասեմ, գործս մի կողմից ուշացաւ ուշ եկա արհեստանոցից, ոչինչ, մի մտածիր, վաղը միասին կը գնանք ու կտեսնես:— Ես էլ եմ գալու ամենքն էլ իրանց հերթին ասացին եկւորները ու սկսեցին քաշել իրանց առաջը Արշակի թէյով լցրած բաժակները: Սարգիս ապերը ամբողջ



օր մի բան չէր կերել, քաղցած էր, բայց որդու հիւանդութեան բօթը խլեց նրա ախորժակը այնպէս, որ հազիւ մի բաժակ թէյ խմեց, երբ Արշակը և ընկերները մի քանի անգամ կրկնեցին:

Երեկոյեան ընտրիքի ժամանակ նա ոչինչ չ'կերաւ: Տխուր աչքերը այս ու այն կողմն էր չռում ու Գրիգորին որոնում, չուխի փէշքով իւր արցունքները սրբում, որոնք աչքերից թափւում ձիւնափայլ միրուքի վրայով հոսում ու կաթկթում էին լաստիկ արխարուղի վրայ: Ամենքն էլ աշխատում էին մխիթարել ծերունուն: Բայց ինչով կարող էին մխիթարել որդեկորոյս հօրը, որը երկար հարիւրաւոր վերստ հեռաւորութիւնից եկել էր որդուն տեսնելու, իսկ նա հիւանդ պարկած է:

Միւս օրը առաւօտեան վաղ շատ վաղ վեր կացաւ Սարգիս ապերը, շորերը հագաւ, երեսը լւաց, չուխի փէշքով սրբեց, իւր մեծ փափախը դրեց մի կողմը, երեսը դարձրեց դէպի արեւմուտք ու սովորականի պէս սկսեց մրմնջալ իւր առաւօտեան աղօթքը: Արշակն ու իւր ընկերները տեսան ծերունուն անհանգստութիւնը վեր կացան, պատրաստեցին աւելի մեծ հարւած տալու նորա սրտին: Տղաները պատրաստեցին ծերունուն առաջնորդելու դէպի այնտեղ, ուր Գրիգորն էր... Սարգիս ապերը տղաների հետ արագ քայլերով գնում էր նաւ-

թի բուրգերի արանքներով, անցան մի քանի հանքեր, ընկան երկար ու լայն ճանապարհը և շարունակեցին դէպի հեռում երևացող տափարակը: Մի քանի ըսպէից յետոյ նրանք գրնում էին հանքերից դուրս բլուրների վրայով: Բնագոյրէն Սարգիս ապերը ինչ որ զգում էր, բայց հարցնել չէր համարձակւում, ինչ որ տըխրութիւն խաւար մշուշի պէս պատել էր նորա սիրտը և կոկորդը խեղդում էին արցունքները: Բաւական տարածութիւն հեռացան նրանք նաւթահանքերի վերջին շինութիւններից. հեռում երևում էին ինչ որ փոքրիկ քարերի մի քանի շարաններ, փայտից ու երկաթից բիզ բիզ կանգնած մի քանի տասնեակ խաչաձև տախտակներ: Ծերունի հօր սիրտը դողաց, ոտները մարմնի ծանրութեանը չ'դիմացան, սիրտը բլեց, աչքերը մթազնեցին և առատ արցունքները հոսեցին միրուքի վրայով: Անզգայացած ընկաւ նա գետնին: Տղաները տրորեցին նորա պառաւած երեսը, սրբեցին աչքերը և ձեռքերից բռնած կիսաքաշ կերպով հասցրին գերեզմանատան փոքրիկ հողի կուտակներից մէկին, որտեղ փոքրիկ տախտակի վրա գրած էր. «Այստեղ հանգչում է Կ. զիւղացի Գրիգոր Սարգսեան Թաւարեանի մարմինը, որը մեռաւ 22-ին Սեպտեմբերի»:—Հայրական սիրտը տանել չըկարողանալով այդ հարւածը, քանի քանի ան-

1007  
32452



91 գամ ուշագնած եղաւ. երկւոր ու երկւոր հողի կուտակը լիզեց ու իւր առատ արցունքներով սառը սև հողը լւաց մինչև, որ տղաները ուժով պոկեցին ծերունի հօրը իւր մին ու ճար որդու գերեզմանից, բերան հանրակացարանը և պարկեցրին որ հանգստանա....

\* \* \*

Հասել էր այն օրը, երբ Սարգիս ապերը պիտի վերադառնար:

Վաղ առաւօտեան գիւղի մի ծայրից մինչև միւս ծայրը Գիւլգաղ տառի բոլոր բարեկամների մէջ տարածւեց, որ այդ օրը Սարգիս ապերը վերադառնում է իւր Գրիգորի հետ «ղարիբութիւնից»: Ամենքն էլ պատրաստւել էին Գրիգորին ընդունելու, իրանց տանիքի տակ հիւրասիրելու: Գիւլգաղ տառը պատրաստւել էր ամեն ինչ իրան յատուկ ճաշակով, վաղուց հաւաքել էր իւր մօտ իր ամուսնացած աղջիկներին, որոնցից ամեն մէկին նշանակել էր՝ որին գաթաներ պատրաստել, որին հաւերը եփել, որին մեղունների փետակներից անուշահոտ մեղր հանել և այլն. իսկ Մարիամին պատւիրել էր, որ հագնի իւր ամենալաւ շորերը, որի մէջ երեք տարի առաջ պսակւել էր Գրիգորի հետ: Ամեն ինչ պատրաստ էր, բոլորն էլ ուրախ զըլարդ սպասում էին իրենց սիրեցեալի վերադարձին: Շատ բարեկամներ ու հարեաններ շուտ

շուտ մարդիկ էին ուղարկում իմանալու Գիւլգաղ տառից, թէ արդեօք չէ վերադարձել Սարգիս ապերը: Գիւլգաղ տառը իրան զգում էր ջահիլացած մի քանի տասնեակ տարիներով: Բոլորին ուրախ ուրախ պատասխանում էր. «ամեն ինչ իւր ձեռքով պատրաստում, ամեն բանի հսկում, որ բոլորը իւր տեղում լինի»:

\* \* \*

Եկեղեցում երեկոյեան ժամասացութիւնը վերջացել էր, աղօթաւորները ցրւում էին դէպի իրանց տները: Գիւղի ներքեի ծայրից մտաւ Սարգիս ապերը նիհարած դեմքով. դողդոջուն քայլերով, ձեռին բռնած իւր հաւատարիմ, մշտական ընկեր ձեռափայտը: Անցաւ եկեղեցու բակով, մօտեցաւ իւր տան շէմքին, ուր տան առաջ հաւաքւել էին բոլորը: Մի քանի քայլ հեռու տան բակից, կանգնեց, աչքերը չուեց բոլորի վրա, կանգ առաւ իւր հայեացքով Մարիամի արտասախառն աչքերի վրա, տարուբերւեց և դողդոջիւն մարմնով կսկածախառն արտասուելու ձայնով ընկաւ գետնի վրայ:

Բոլորի հարցերին Սարգիս ապերը միմիայն մի խօսքով էր պատասխանում—մեռաւ.... մեռաւ....

Վ Ե Ր Ջ:



... արհեստներն անհատական արհեստներն են  
... արհեստներն են արհեստներն են արհեստներն են  
... արհեստներն են արհեստներն են արհեստներն են  
... արհեստներն են արհեստներն են արհեստներն են  
... արհեստներն են արհեստներն են արհեստներն են  
... արհեստներն են արհեստներն են արհեստներն են

... արհեստներն են արհեստներն են արհեստներն են  
... արհեստներն են արհեստներն են արհեստներն են  
... արհեստներն են արհեստներն են արհեստներն են  
... արհեստներն են արհեստներն են արհեստներն են  
... արհեստներն են արհեստներն են արհեստներն են  
... արհեստներն են արհեստներն են արհեստներն են  
... արհեստներն են արհեստներն են արհեստներն են  
... արհեստներն են արհեստներն են արհեստներն են  
... արհեստներն են արհեստներն են արհեստներն են  
... արհեստներն են արհեստներն են արհեստներն են



171

52

24

գր


ВФ

ՀՀ Ազգային գրադարան



NL0365327







52009